

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ



ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

49րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 7

12 ՓԵՏՐՈՒԱՐ 1900

Մասիս շաբաթերթի տարեկան բաժանորդագրինն է կես օսմ. ոսկի թե՛ Կ. Պոլսոյ եւ թե՛ գաւառներուն համար, կանխիկ : Արտասահման՝ 12 ֆրանկ : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մեկէն :

Մասիս հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխավառաններուն ու Պահչե-Գաբուշի ջրավառաններուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավառաններուն բով :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

«Մասիս»ի ներկայ համարը կը պարունակէ ՎՍԵՄ. ՆՈՒՐԵԱՆ ԷՅԷՆՏԻԻ մեծադիր պատկերը, կենսագրական յօդուածով մը մեկտեղ :

ՀԱՍՑԷ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Ղալաթիս, Նորասունկեան Խան, Թիւ 13

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԴԵՂԱՐԱՆ “ՆՕՌՄԱԼ”

192 ԲԵՐԱ ՄԵԾ-ՓՈՂՈՑ 192

Բերայի կեդրոնը, եւ «Սիթէ տը Բերա» չէնքին անկիւնը հաստատուած այս նոր դեղա-
րանը որ դեղագործութեան արուեստին ամէն կատարելութիւններով օժտուած է, իր դե-
ղերուն զտութեամբ, թարմութեամբ եւ դիւրամատչելի գիներով օգտակարապէս կը ներկա-
յանայ կրկին հասարակութեան եւ իր վաղեմի յաճախորդներուն:

Դեղարանին տէրը՝ Հ. Էմիրդէեան՝ քանի տարիներէ ի վեր ծանօթ է Կ. Պոլսոյ Սուլթան
Մահմուտի դամբարանին դիմաց իր ունեցած մեծ դեղարանովը զոր ամբողջովին ծախած եւ
այս նորը հիմնած է:

Դեղարանին վրայ խորհրդակցութեան սենեակ մը յարդելի բժիշկներուն տրամադրութեան
ներքեւ գրուած է եւ դեղարանը մինչեւ կէս զիշեր բաց է:

ԵՃԳ ՈՅՊ Կ“ՈՎՈՂՈ”

Դ ԿՂԳԵՆՈՂՈՅ

ԿՂԳԵՆՈՂՈՅ ԿՂԳԵՆՈՂՈՅ ԿՂԳԵՆՈՂՈՅ

ՄԱՍԻՍ

49-րդ ՏԱՐԻ

— 12 ՓԵՏՐՈՒԱՐ 1900 —

ԹԻԻ 7

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հին Տոմար — Նոր Տոմար. ՏԻՐԱՅԻՐ — Իմ առաջին շերտուած. Մ. ԱՃԷՄԵԱՆ. — Կայս. Բժշկական
Ընկերութեան հայ անդամները. ՏՈՒԹ. ՎԱՀՐԱՄ ԹՈՐԳՈՄԵԱՆ. — Բանաստեղծութիւններ. Անձանօրը. Զիւնը.
Գ. ԶՕՀԻՍՊ. — Պոռայտեր Ռակացի շուրջը (Ուղեւորական Յիշատակներ). Տ. Հ. — Նուրեան Էփէնտի մանր.
ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ. — Յիշատակ (Ոտանաւոր). Կ. ՈՍԿԵԱՆ. — «Մասիս»ի Յուշատեարը. Տ. Ա.:

ՀԻՆ ՏՈՄԱՐ — ՆՈՐ ՏՈՄԱՐ



ՅԻ անունները ժողովրդեան
ամէն դասակարգին մէջ ծա-
նօթ են, եւ ամէն ոք գիտէ
թէ Հին տոմարը՝ որ է մեր

Արեւելցոցս գործածած տոմարը, Նոր տոմարէն՝ այսինքն Եւրոպացոց գործածած տոմարէն տարբերակու օր կտք է. այնպէս որ երբ մեզի համար ամսուն 1 է, Եւրոպացոց-համար 13 է. Սակայն այդ հաշիւը որ հարիւր տարիէ ի վեր ճիշդ էր, այլեւս սխալ պիտի ըլլայ. Այս փոփոխին՝ վերջին անգամ ըլլալով այսպէս եղաւ, բայց առաջիկայ Մարտին՝ երբ մեզի համար ամսուն 1 ըլլայ, Եւրոպացոց համար պիտի ըլլայ ամսուն 14ը. եւ տարբերութիւնը այսուհետեւ ճաստներկու օրուան տեղ պիտի ըլլայ ճաստներեօր. Կ'արժէ ուրեմն որ այս նորութեան պատճառը բացատրուի:

Երկու հատ ժամանակի գլխաւոր չափեր

ունինք զօրս բնութեան վրայէն կ'առնենք:

Կը տեսնենք որ արեւը կ'ելլէ, կը բարձրանայ, կը մտնէ, կը խաւարի, եւ դարձեալ նորէն կը ծագի. Մէկ կէտէն՝ մինչեւ միւս կէտը կատարուած շրջանը կը կոչուի ՕՐ:

Կը տեսնենք եւս որ օրը լոյսի ու խաւարի, կամ լաւ եւս ցերեկի ու գիշերի տարբերութիւններ ունի. հաւասար կ'ըլլայ, ետքէն ցերեկը կ'երկնայ, վերջէն նորէն կը քիչնայ, մինչեւ նորէն հաւասար կ'ըլլայ, ետքը գիշերը կը սկսի երկնալ, եւ վերջէն կարճնալ, եւ նորէն հաւասարութեան կու գայ. այդ մասին ալ մէկ կէտէն սկսելով նոյն կէտ դարձող շրջանը կը կոչուի ՏԱՐԻ:

Եթէ տարի մը ճիշդ թուով ամբողջ օրերէ բաղկանար, հաշիւը չառ դիւրին կ'ըլլար. սակայն տարիի մը շրջանը ճիշդ ու ճիշդ սալափ օր չկաղմէր, այլ 365 օրերուն վրայ կուտորակ մըն ալ ունի, որ 6 ժամի, այսինքն քառորդ օրուան չափ է, սակայն ճիշդ 6 ժամ ալ չէ, այլ բան մը պակաս է, այսինքն 11 ու քառորդ վայրկեանի չափ պակաս է, կամ աւելի ճիշդ, տարին է 365 օր, 5 ժամ,

48 վայրկեան , 47 րոպէ (կամ երկվայրկեան) եւ 33 ակնթարթ (կամ եռվայրկեան) , որ թուաբանական ձեւով կը գրուի

365, 50', 48", 47", 33"

նոյնը տասնորդական կոտորակի ձեւով կը գրուի

365,242217

եթէ այդ կոտորակներու կամ կոտորտանքներու հաշիւը չըլլար , տարիին չափը չատ դիւրին կ'ըլլար , բայց քանի որ պէտք էր ամբողջ օրերու թուով սահմանել տարին , եւ կոտորտանքներն ալ իրարու քով բերելով օր կազմել եւ երբեմն տարիին վրայ յաւելուած օրեր դնել , հարկ եղաւ ոճնեմալ սովորական տարիներ , եւ յաւելուածով տարիներ որոնք կոչուեցան ՆԱՀԱՆՁ , իսկ նահանջ տարիներու կազմութեան մէջ ամէն ազգ իրեն կամաւոր ձեւ մը ընդունեցաւ , եւ այս կերպով իւրաքանչիւր ազգ իրեն սեփական ՏՈՄԱՐ մը ունեցաւ :

Մենք մտադիր չենք զատ զատ տոմարները այստեղ բացատրել . անոր համար իսկ զանց բրինք բողբոլին Լուսնի հաշիւը յիշել , որովհետեւ լուսնային տոմարներու վրայ պիտի չխօսինք :

Աշխարհի մէջ չատ հինէն , եւ նոյնիսկ Եգիպտացոց , եւ Քաղդէացոց , եւ Պարսից եւ Հայոց մէջ ընդունուած էր որ տարին 365 օր եւ վեց ժամ է , այսինքն 365 ու մէկ քառորդ օր : Հին Հայոց տոմարը , այդ քառորդ օրերը կը պահէր մինչեւ որ ամբողջ տարի մը , այսինքն 365 օր գումարուէր , որ կը լրանար չորս անգամ 365 , այսինքն 1460 տարիներու մէջ , եւ 1460 ամէնն ալ 365 օրով տարիներու կ'ըսէր մէկ ՇԲՁԱՆ , եւ չըջանին վրայ ամբողջ ՆԱՀԱՆՁ ՏԱՐԻ մը կ'աւելոյնէր 365 օրով , եւ ետքէն կը սկսէր նոր չըջանը : Այս հաշիւը տակաւին մեր օրացոյցներուն ճակատան ալ կը տեսնուի Բռն թուական Հայոց անունին տակ . սակայն օրացոյցին ճակատէն անդին՝ վրան մտադրութիւն իսկ դարձնող չկայ , ուստի աւելի բացատրութեան ալ պէտք չկայ :

Մեր սովորական տոմարը Յուլեան Տոմարն է , զոր այսօր կ'անուանենք Հին Տոմար : Այդ տոմարը սկսաւ Հռովմայ 710 տարին կամ Քրիստոսէ 45 տարի առաջ , Յուլիոս Կե-

սար Հռովմայեցոց կայսեր իշխանութեամբ եւ Սոսիգենէս Աղեքսանդրացի աստղագէտ փիլիսոփային հաշուով : Միշտ իբր հիմ առնուեցաւ թէ տարին 365 ու մէկ քառորդ օր է , եւ հետեւաբար քառորդ օրերը չորս տարին անգամ մը ամբողջ հաշուելով , երեք սովորական տարիներէ ետք չորրորդ նահանջ տարի մը գրուեցաւ . այսինքն երեք տարի 365 օրով եւ տարի մը 366 օրով , եւ այդ յաւելուած օրն ալ փետրվար ամսոյն վրայ գրուեցաւ , որ սովորական տարիներու մէջ 28 , իսկ նահանջ տարին 29 օր պիտի ունենար :

Սկիզբը ցուցուած հաշուէն կ'իմացուի , որ այս հաշիւը բոլորովին ճիշդ չէր , վասն զի 11 ու քառորդ վայրկեաններու տարբերութիւնը նկատի առնուած չէր , որ ինչչափ ալ իր մէջը փոքրիկ , սակայն հարիւր տարիներու մէջ կրնար օր մը կազմել եւ հաշիւը խախտել , թէպէտեւ այդ փոքրիկ տարբերութիւնը Յուլեան տոմարի սկիզբէն 85 տարի առաջ , Հիպպարքոս յոյն աստղագէտէն ճանչցուած էր , բայց կ'երեւի թէ Սոսիգենէսը համոզուել չափ հաստատուն չէր կարծուեր ու հաշուի չափնուեցաւ :

Դարեր անցան եւ Յուլեան տոմարը առանց դիտողութեան գործածուեցաւ , թէպէտեւ նկատողութիւն ընողներ չպակսեցան . եւ Քրիստոսէ 45 տարի առաջ սկսուած տոմարը հասաւ առանց փոփոխութեան մինչեւ Քրիստոսի 1582 թուականը , որ եղաւ Նոր տոմարի կամ Գրիգորեան տոմարի սկիզբը : Ամէնուոճն մտադրութիւնը հրաւիրող կէտը եղաւ Զատիկին հաշիւը , Նիկիոյ Ս. Ժողովոյն որոշմամբ հաստատուած էր Զատիկը տօնել դարնանային գիշերահաւասարին վրայ եկող լուսնի լրումէն ետքը եկող կիրակին , եւ միանգամայն տոմարական հաշուով հաստատուած էր մարտ 21 օրը իբրեւ գիշերահաւասար , եւ այդ հիմամբ շինուած էին թէ՛ Էսա Աղեքսանդրացիի եւ թէ՛ Իրիոն Բիւզանդացիի տոմարական ցուցակները որոնցմով կը վարուէին բոլոր Քրիստոնեայ ազգերը : Արդ , աստղաբաշխական հաշիւներով ալ եւ պարզ փորձառութեամբ ալ կը տեսնուէր որ մարտ 21ը այլեւս գիշերահաւասար չէր . եւ թէպէտ տոմարա-

կան հաշուով այնպէս կ'ենթադրուէր, սակայն իրօք աւելի կանուխ կը հանդիպէր զիշերահաւասարը :

Իրաւցնէ ալ տարին 365 օր եւ վեց ժամ կարծուելուն եւ բուն տարւոյն չափին մէջ տարբերութիւն կար . քանի որ մէկ տարւոյն կոտորակը , $5^0, 48', 47'', 33'''$, չորս տարւոյ մէջ կ'ըլլայ $23^0, 15', 9'', 32'''$, եւ երբ նաճանջ տարւոյն 2½ ժամ կամ 1 օր աւելցուի , ամէն չորս տարի $0^0, 44', 50'', 68'''$, աւելի դրուած կ'ըլլայ , որ հարիւր տարւոսն մէջ կ'ըլլայ $18^0, 41', 7'', 0'''$. Իսկ Նիկիայ Ս. Ժողովոյն տարիէն 325էն մինչեւ 1582 թուականը , 1257 տարիներ անցեր էին եւ տարբերութիւնը աչքի զարնելու չափ եղած էր : Գրիգոր Ժ.Գ. Բնութիւնի պապին իշխանութեամբ Հռովմայ մէջ ժողովուեցան Լիլիօ , Կլավի , Սիրլետ , եւ ուրիշ նշանաւոր աստղագէտներ , եւ ճշգեցին որ 1582ին գիշերահաւասարը եղած է իրօք մարտ 11ին , այսինքն աստղական մարտ 21էն 10 օր յառաջ , եւ որպէս զի Նիկիական սկզբունքը , այսինքն գիշերահաւասարը մարտ 21ին պահելու կանոնը ճշմարտուի , հարկ եղաւ ետեւ մնացած 10 օրերը չափել , եւ որոշուեցաւ որ զլիսաւոր ամիսէն հետո միջոցի մը մէջ տասն օրեր մէկէն անցուին , եւ հետեւաբար 1582 տարւոյ հոկտեմբեր 4էն ետքը փոխանակ ըսելու 5 , ըսին 15 . եւ այս եղաւ Նոր տոմարին սկիզբը . իսկ Հին տոմարին հետեւողներ միշտ հոկտեմբեր 5 ըսին եւ 10 օր ետեւ մնացին : Այստեղ անցողակի ըսենք թէ գիշերահաւասարը հարկաւ մարտ 21ին բերելու բնական եւ բացարձակ պահանջ մը չկար , եւ ամէն ամսուն ամէն օրը գիշերահաւասար կրնար հաշուուիլ , բայց այդ պահանջը ծագած է միայն դատական հաշուոյն համար դրուած Նիկիական կանոնէն :

Գրիգորեան կամ Նոր տոմարը չգոհացաւ անցեալին տարբերութիւնը միայն ուղղելով , այլ ուղեց ապագային ալ տարբերութեան տեղի չտալ : Արդ , նկատելով որ չորրորդ տարին հաստատուն կերպով նաճանջ հաշուելով եւ 366 օր ընելով իւրաքանչիւր տարւոյ տարբերութիւնը կ'ըլլայ`

365.250000

365.242217

0,007783

եւ հարիւր տարւոյ տարբերութիւնը կ'ըլլայ $0,007783 \times 100 = 0,778300$

Իսկ չորս դարու այսինքն չորս հարիւր տարւոյ մէջ կ'ըլլայ

$0,778300 \times 4 = 3,113200$

որ ըսել է թէ երբ չորս տարին 1 , եւ մէկ դարին մէջ 25, եւ չորս դարին մէջ 100 նաճանջ կատարուի , չորս հարիւր տարւոյ մէջ երեք օր եւ բան մը աւելի դրուած կ'ըլլայ . ուստի ուրոշուեցաւ որ ամէն չորս դար ոչ եւս 100 , այլ լի 97 նաճանջ կատարուի : Կանոնը աւելի եւս ճշգրտու համար սահմանուեցաւ որ չորս դարավերջի տարիներէն երեքին նաճանջը զեղչուի , եւ մէկը պահուի , եւ ճշգրտ պահուի այն դարավերջին նաճանջը որուն հարիւրաւորները 4ի բաժանելի են :

Այդ կանոնով 1582էն ետքը առաջին դարավերջի տարին 1600 էր , եւ հարիւրաւորները 4ի բաժանելի ըլլալուն` նաճանջը պահուեցաւ , եւ տարբերութիւնը մնաց 10 : Իսկ 1700ին նոր տոմարին նաճանջը զեղչուեցաւ եւ հին ու նոր տոմարներուն տարբերութիւնը եղաւ 11 օր . նոյնպէս 1800ին նաճանջը զեղչուեցաւ նոր տոմարին մէջ եւ հին տոմարի հետ տարբերութիւնը եղաւ 12 օր , ինչպէս որ մենք ալ կը գործածէինք մինչեւ ցայսօր : Նոյն կերպով ներկայ 1900 տարին ալ նոր տոմարին համար նաճանջ չէ եւ անոր փետրվարը 28 օր է , իսկ մեր հին տոմարին համար նաճանջ է , եւ փետրվարը 29 օր ըլլալով օր մըն ալ տարբերութիւննիս պիտի չաւանայ , եւ 12ը պիտի ըլլայ 13 օր , եւ առաջիկայ մարտ 1ին զգալի պիտի ըլլայ , նոյն օրը նոր տոմարին համար մարտի 14 ըլլալով : Եւ այսպէս պիտի ճշմարտուի այն նորութիւնը զոր յօդուածիս սկիզբը ակնարկեցինք եւ բացատրել ուղեցինք :

Նոր կամ Գրիգորեան տոմարը հետզհետէ տարածուեցաւ արեւմտեան աղագրու մէջ , զի 1582ին ընդունեցան միայն Իտալիա , Գաղղիա (Ֆրանսա) , Սպանիա , Լուսիտանիա (Բօրթուկալ) եւ Բելգիա (Պելճիքա) , 1583ին Հնդկաստան (Չուիցերա) հռովմէադաւան դաւառները , 1584ին Աւստրիա , 1585ին Գերմանիոյ հռովմէադաւան երկիրները , 1586ին Լեհաստան , 1587ին Մաճառաստան , ամէն

ալ հռովմէադաւան եւ պապական իշխանութեան հպատակող երկիրներ : Բողոքական երկիրներ դարձեալ ետքը սկսան ընդունիլ : 1700ին բնութենեցան Բրուսիա եւ Հոլանտիա , 1701ին Հելուեաիոյ բողոքական դաւանները , 1752ին Անգղիա , եւ 1753ին Շուեաիա եւ Նորվեգիա , իսկ Ամերիկայի գաղթականութիւնք հետեւեցան իրենց ընտղաւանութուն :

Արեւելեան քրիստոնեայք ընդհանրապէս , այսինքն է Ռուսք , Յոյնք , Հայք , Ռումէնք , Սերբիացիք , Բուլղարք , Ասորիք , Քաղչեացիք եւ այլք՝ տակաւին Հին կամ Յուլեան տոմար կը գործածեն , եւ միայն հռովմէադաւան արեւելցի քրիստոնեաներէ աստեւանդ փոքրիկ հատուածներ Նոր կամ Գրիգորեան տոմար սկսած են գործածել , որ նշանակութենէ զուրկ է քանի որ համադեղ եւ համաբնակ եւ նոյնիսկ համադաւան ազգեր իրենց չուրջը ընդհանրապէս հին տոմարով կը վարուին : Այդպիսի փոփոխութիւն որչափ եւ գիտնականարար ստոյգ , եւ եկեղեցականաբար ոչ-անյարմար , սակայն միայն համերաշխութեամբ եւ համաձայնութեամբ կատարուած ատեն նշանակութիւն կ'ունենայ :

Ստոյգ է որ երբ Հին Տոմարի կանոնով զիշերահաւասար եւ լուսին կը հաշուենք , բուն իսկ բնութեան մէջ զիշերահաւասարին եւ լուսնին չենք համապատասխաներ , եւ Զատիկնիս ալ Էստեան կամ Իրիոնեան ջու-

ցակներու համաձայն ըլլալով՝ երկինքին հետ համաձայն չգտնուիր : Սակայն Քրիստոսի առնախաբութեանց օրերը ծիսական կէտեր են , եւ աստղագիտական հաշիւներու կապուելու պէտք չունին , եւ տարբեր օրերու մէջ ալ հաւասարապէս Աստուծոյ հաճոյ են :

Նոր տոմարին մէջ ալ տակաւին պղծիկ տարբերութիւն մը կը մնայ , զի չորս հարիւր տարուան տարբերութիւնն էր 3,113200 , եւ երբ 3 օրը երեք նաճանջներու զեղչմամբ կ'ուզուի կը մնայ 0,113200 տարբերութիւնը չորս հարիւր տարուան մէջ , որ հաղիւ 3600 տարուայ մէջ կընայ օր մը կաղմել , եւ այս ալ թո՛ղ հոգան այն թուականին զիտնականները , եւ բացառաբար դարաւերջի տարուայ նաճանջ մըն ալ զեղչեն : Մենք կը յուսանք թէ հիմակուրէն սկսած համաձայնութեան խօսքերը շատ չեն կրնար երկարիլ , եւ դույցէ մօտ ատենուան մէջ նոր տոմարը արեւելեան ազգերէ ալ կ'ընդունուի համերաշխութեամբ : ամէն՝ ամթի մէջ 2000ին երկու տոմարներն ալ նաճանջ ունին , եւ միայն 2100 մարտ 1ին տարբերութիւնը 14 օր պիտի ըլլայ , որ մեզի համար շատ հեռու է , եւ եթէ մինչեւ այսօր 12 օրերու տարբերութեամբ կրցանք առանց դժուարութեան ապրիլ , 200 տարի եւս 13 օրերու տարբերութեամբ եւ նոյնպէս առանց դժուարութեան կրնանք ապրիլ :

ՏԻՐԱՅՐ (*)

(*) Ծ. Խ. — Բուն Տիրացրը

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԺՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ԱՆԴԱՄՆԵՐԸ



ԵՏՐՎԱՐ 15ին , Կ. Պոլսոյ Կայս. Բժշկական Ընկերութիւնը գրեթէ կէս դարու շրջան մը կը բոլորէ , աւարտելով իր հաստատութեան 44րդ տարին , սկսելու համար 45րդը :

Այս գիտական Ընկերութիւնը , որ հաստատուած է Խրիմու պատերազմէն վերջը , հիմնադիր ունեցած է Հոլանտացի բժիշկ մը Տօքթ. Բինքսի անուն , որ առաջին անգամ 1855 օգոստոսին յղացած է անոր գաղափարը , եւ նոյն ատենը Կ. Պոլիս գլխաւոր զինուորական օտար բժիշկներն ալ իրեն խորհրդակից առնելով , գրեթէ վեց ամիս յե-

տոյ՝ 1856 փետրվար 15ին յաջողած է կազմակերպել այդ ընկերութիւնը եւ զումարել ա-
նոր առաջին հանդիսաւոր նիստը :

Այդ օրէն մինչեւ այսօր, Կայս. Բժշկական Ընկերութիւնը ունեցած է բաւական թուով
հայ անդամներ, որոնք ոչ միայն Ընկերութեան հաստատմանը մեծնուէս սատարած են,
այլ եւ, իրենց բժշկական աշխատասիրութիւններովը մեծ փայլ տուած են անոր :

Կ. Պոլսոյ Կայս. Բժշկական Ընկերութեան հայ անդամները մինչեւ այսօր եղած են թուով
31, որոնց անունները աւասիկ, իրենց ընտրութեան թուականներուն կարգաւ :

1.	Տօքթ. Տալուտեան,	Ընտրուած	1856	Մարտ	29ին	(վախճանեալ)
2.	» Սերվիլէն,	»	1856	Ապրիլ	26ին	»
3.	» Սինապեան,	»	1856	Մայիս	10ին	»
4.	» Բօրովիչ,	»	1856	Օգոստոս	1ին	»
5.	» Մօզեան,	»	1856	Սեպտ.	26ին	»
6.	» Ռուսինեան,	»	1856	Հոկտեմբեր	12ին	»
7.	» Բարունակ (պէյ),	»	1856	Նոյեմբեր	21ին	»
8.	» Սեւեան (փաշա),	»	1861	Մայիս	3ին	
9.	» Խօրասանեան,	»	1866	Փետրվար	2ին	
10.	» Քեաթիպեան,	»	1867	Նոյեմբեր	8ին	(վախճանեալ)
11.	» Նուրիճեան,	»	1867	Նոյեմբեր	22ին	»
12.	» Ռաֆայէլեան,	»	1868	Մարտ	13ին	»
13.	» Փէշտիմալեան (փաշա),	»	1869	Փետրվար	12ին	»
14.	» Նաֆիլեան	»	1871	Դեկտեմբեր	15ին	
15.	» Մարկոսօֆ,	»	1872	Նոյեմբեր	15ին	
16.	» Թիւրապեան,	»	1872	Նոյեմբեր	15ին	
17.	» Մատթէոսեան,	»	1873	Փետրվար	7ին	
18.	» Այվազեան,	»	1875	Դեկտեմբեր	24ին	
19.	» Վիլչէն. Օրմանեան,	»	1882	Փետրվար	4ին	(վախճանեալ)
20.	» Չօպանեան,	»	1882	Փետրվար	4ին	
21.	» Տասրրեան,	»	1884	Փետրվար	8ին	
22.	» Ռօպէնօն,	»	1888	Մայիս	2ին	
23.	» Տօպրաշեան,	»	1890	Ապրիլ	18ին	
24.	» Թարգոմեան,	»	1890	Յունիս	13ին	
25.	» Եազուպեան,	»	1890	Նոյեմբեր	14ին	
26.	» Չարդարեան,	»	1890	Դեկտեմբեր	26ին	
27.	» Գասպարեան,	»	1891	Փետրվար	6ին	
28.	» Սեդրոսեան,	»	1892	Ապրիլ	22ին	
29.	» Գարաղաշեան,	»	1895	Նոյեմբեր	8ին	
30.	» Արզումանեան,	»	1895	Նոյեմբեր	8ին	
31.	» Աճէմեան պէյ,	»	1897	Դեկտեմբեր	26ին	

Բացի այս անդամներէն, Բժշկական Ընկերութիւնը ունեցած է նաեւ չորս հատ ալ Հայ
Թղթակից անդամ, որոնք են՝

1.	Տօքթ. Պէյրան, Բարիզի,	Ընտրուած	1858	Սեպտ.	15ին	(վախճանեալ)
2.	» Շաշիեան, Նանսիի,	»	1868	Դեկտ.	20ին	»
3.	» Խանճիւեան, Ազր. Պոլսոյ,	»	1893	Նոյմ.	24ին	
4.	» Քէմհաճեան, Բարիզի,	»	1895	Հոկտ.	18ին	

Եւ այսպէս ընդ ամէնը 35 հայ բժիշկ մասնակցած կ'ըլլան Կայս. Բժշկական Ընկերութեան :

Այս անդամներէն ոմանք Ընկերութեան հիմնադիրներէն եղած են . մէկ քանին պատիւ ունեցած են անոր Նախագահական աթոռը բազմեւ , մէկ հասն ալ արժանի եղած է Ընկերութեան Պատուոյ անդամ ըլլալու :

Ընկերութեան հիմնադիր անդամներէն համարուածներն են՝ զլխաւորաբար , Տօքթ. Տաւուտեան , Տօքթ. Սինապեան եւ Տօքթ. Սերվիշէն , որ 1856ին ալ յաջողած ի նպաստ այս Ընկերութեան սահմանել տալ Կայսերական կառավարութեան Գանձէն կարեւոր թոշակ մը որ կը շարունակուի մինչեւ այսօր :

Նախագահ ընտրուածներն են ,

1.	Տօքթ. Սերվիշէն ,	1858	Փետրվար	15 է —	1859	Փետրվար	15.
2.	» Սինապեան ,	1863	Օգոստոս	15 է —	1864	Օգոստոս	15
—	» Սերվիշէն, դարձեալ,	1865	Օգոստոս	15 է —	1866	Օգոստոս	15
3.	» Նուրիճան ,	1876	Փետրվար	15 է —	1877	Փետրվար	15
4.	» Փեշտիմալճեան,	1877	Փետրվար	15 է —	1878	Փետրվար	15
—	» Նուրիճան, դարձեալ,	1885	Փետրվար	15 է —	1886	Փետրվար	15
—	» » »	1886	Փետրվար	15 է —	1887	Փետրվար	15
5.	» Խօրասանճեան էֆ.	1898	Փետրվար	15 ին ,	բայց	չէ ընդունած :	

Ընկերութեան պատուոյ անդամ եղած է միայն Տօքթ. Գասպար պէյ Սինապեան , որ ընտրուած է 1868 սեպտեմբեր 25ին :

Դեր-Նախագահի , քարտուղարի , ինչպէս նաեւ խմբագրի պաշտօնները կատարող հայ բժիշկներ ալ եղած են բազմիցս . աւելորդ կը համարիմ սակայն անոնց անունները գրել հոս մի առ մի :

Կայս. Բժշկական Ընկերութեան 35 հայ անդամներէն 14 հատը մեկնած են արդէն աշխարհէ :

Չորս հատը Պոլսէն հեռու կը գտնուին :

Երկու հասն ալ կը բնակին արտասահման , իրրեւ թղթակից անդամ :

Կ. Պոլսոյ մէջ այժմ կը գտնուին 11 հայ անդամ , ինչ որ շատ քիչ է եւ աննշան իսկ , բազմամեծ մայրաքաղաքիս մէջ գտնուած հայ բժիշկներու հոծ բազմութեան :

Բժշկական ընկերութիւնը , իր հաստատուած օրէն սկսեալ կը հրատարակէ «Gazette Médicale d'Orient» անուն ամսաթերթ մը , որուն 44 տարուան հատորներուն մէջ շատ ազդեր կը կարգացունին հայ անդամներու բժշկական գործերը :

Ուրիշ առթիւ մը պիտի ջանամ ներկայացնել այդ բոլոր գործերը . այժմ կը ցանկամ որ Կայսերական Բժշկական Ընկերութեան հայ անդամներուն թիւը շատնայ , գոնէ կրկնապատիկ , եւ այս՝ ի պատիւ եւ ի յիշատակ այն հայ բժիշկներուն որոնք Կայս. Բժշկական Ընկերութեան առաջին եւ գործօն անդամներէն եղած են , եւ թէեւ անհետացած այսօր , բայց անմոռաց անուն թողած են Ընկերութեան տարեգրութեանց մէջ :

Բերա 3/15 Փետրվար.

ՏՕ-ԲԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ





ԱՆՇԱՆՕԹԸ

ՈՂՈՑԻՆ մեջ կերթար, կարծես կը սահէր,
Յուշիկ քայլով, դանդաղ, գրեթէ շրվացող,
Դեմքը կազէ լաջակի մեջ կը պահէր,
Պատմունճան մը ունէր հովին ծրվացող:

Աղւոր, տգէղ, ինչ փոյր, բաւեց որ մտքես
Մարմին մը տամ ես ուզածիս պէս իրեն,
Վըղովիչ հով, պջրանք մը լուռ, վերջապէս
Ամէն բաներն որոնց համար կը սիրեն:

Ու տարիներ սրտիս խորը ջանացի
Պահել գինքը մասունքի պէս, եւ մէկուն
Զըսի անոր՝ հրապոյրները կանացի
Որ գիշերներս ըրին խռոված և անքուն:

Ի՞նչպէս եղաւ, ո՞վ երազի ծնունդ կին,
Որ ըստուգիւ մարմին առած, խրոխտ ու վէս,
Դեռ անցեալ օր բատրոնի մը հոծ մուտքին՝
Զի ճանչցողի մը պէս անցար իմ քովես:

6/18 Փետր. 1900

ԶԻԻՆԸ



ԿՆԱԽԸՏԻՂ անրբծութիւն մը վերէն
Երկնից վրճիտ բարձրութենէն կիշնար վար,
Վարանելով, օրօրուելով, ծուլօրէն,
Քալուածքին պէս կնոջ մը մարմնեղ եւ ըստուար:

Ու փողոցին՝ մայրին վրայ կը փռուէր
Ճերմակութիւնն իրեն քրնքուշ՝ ցեխին քով.
Ոտքերու տակ կը կոխկըռտուէր, կը լըռէր,
Անտրտունջ միշտ ու քիչ՝ մըն ալ հաճոյքով:

Վերէն հիմայ ձիւնը առատ կը մաղուէր,
Յօժարակամ բողլով երբեք կապոյտ.
Անձնամատոյց կիսն էր ան որ կը բաղուէր
Փոսի մը մեջ ցեխի, անհոգ ու անփոյր:

6/18 Փետր. 1900

Գ. ԶՕՀՐԱՊ

ՆՈՒՐԵԱՆ ԷՖԵՆՏԻ ՄԱՅԸ



ԱՍԻՍԻ նախորդ թիւը մամուլին յանձնուած էր արդէն, երբ Նուրեան Էֆէնտի տի մահուան ցաւալի լուրը տարածուեցաւ մայրաքաղաքին մէջ։ Նուրեան Էֆէնտի՝ երեք օրուան տառապագին հիւանդութենէ ետքը որ զինքը զբաղադիր կը թողուր՝ հոգին աւանդեց հինգշաբթիէն ուրաթ լուսնալու գիշերը, Բերա՝ իր ընտանեացիներէն մէջ, չըջապատուած իր ընտանիքին անդամներէն ու բժիշկներէ որոնք անընդհատ կը հսկէին իր սնարին մօտ։

Ուրաթ եւ չարաթ, մայրաքաղաքին ոչ միայն հայերէն, այլեւ թուրքերէն ու ֆրանսերէն օրաթերթերը հրատարակեցին հանգուցեալին կենսագրութեան զխաւոր գիծերը, թուելով անոր մատուցած ծառայութիւնները, վարած կարեւոր պաշտօնները եւ վեր առնելով անձնական արժանիքը ու կարողութիւնը Բնական էր որ ազգ. լրագիրները ամէնէն աւելի լայն տեղը տային այդ կենսագրական ծանօթութեանց որոնց մէկ ամփոփումը կ'ընենք մեր կարգին, ձայնակցելով մեր պաշտօնակիցներուն ցաւակցական արտայայտութեանց։

Վաթսուն տարեկան էր Նուրեան Էֆէնտին, իր մեծ մօրեղբոր՝ Պէղճեան Յարութիւն Ամիրայի մահէն ետքը ամբի ետքը՝ 1839ին ծնած ըլլալով Իւսկիւտարի մէջ։ Պատանի հասակէն ուշիմութեան եւ ընդունակութեան ապացոյցներ տուաւ եւ ծնողացը կողմէ Բարիզ զրկուեցաւ դատարարակուելու։ Ուսանողական փալտուն չըջան մը բոլորած եւ Պոսկաւորի վկայականը գրպանը, 25 տարեկան հասակին Կ. Պոլիս դառնալով, Բ. Դրան ծառայութեան

մէջ մտաւ ուր գնահատուելով իր արժանիքը՝ արագապէս յառաջդիմեց։

Առաջին պաշտօնը զոր վարած է, Արտաքին գործոց նախարարութեան թղթակցութեանց գլխաւորն մէջ պահ մը մօրդուելէ ետքը, Սերպիոյ Կայս. Գումիսէրութեան քարտուղարութիւնն է, որմէ ետքը Պէլկրատի Օսմ. Գումիսէր նշանակուեցաւ։ Վարած է նաեւ Նաբօլիի Օսմ. Հիւպատոսութիւնը։ Պահ մը Դատական նախարարութեան մէջ ալ զանուած է, իր գոտաւոր, եւ Հոլանտի ու Զէյթսի կողմերը զրկուած է պաշտօնով։

Նուրեան Էֆէնտի, ինչպէս յայտնի է, երկար ամբիներէ ի վեր կ'անդամակցէր Պատական Խորհուրդին, որուն Օրէնսդրական ճիւղին կարողալոյն անդամներէն մէկը հանդիսացած էր, միեւնոյն ատեն վարելով Երկրագործական դրամատան Վարչական Խորհուրդին նախագահութիւնը եւ Կարմիր-Մահիկի դեր-նախագահութիւնը։ Այս վերջին երկու մեծ մարմիններուն կազմակերպութեան ու զարգացման գործին մէջ կարեւոր բաժին մը ունեցած է։

Հանգուցեալը բարձրացած էր մինչեւ Պալայի ամտիճանին եւ արժանացած էր Օսմանիյէ ու Մէճիսիյէ Ա. կարգի պատուանշաններուն։ Ստացած էր նաեւ զանազան օտար պատուանշաններ։

* * *

Ազգային չըջանակի մէջ Նուրեան Էֆէնտի ունեցած է կարեւոր գործունէութիւն մը։ Իր պերճախօսութեամբը եւ իր վարչական կարողութեամբը կանուխէն ուշագրաւ գիրք մը բռնելով Պատրիարքարանի Ժողովներուն մէջ, յաջորդաբար անդամակցած ու ատենապետած է անոնց, զխաւորապէս Քաղաքական Ժողովին՝ Տ. Յարութիւն Ս. Պատրիարքի օրով, որուն՝ ինչպէս նաեւ Երուսաղէմի վանքին ու միաբանութեան վրայ մասնաւոր սէր մը ունէր եւ այս պատճառաւ՝ իր գիրքին ու պաշ-

աօնին ընդամենը ծառայութիւններ մատուցած է յիշեալ Աթոռին, մանաւանդ Կարկուռի հոգային հռչակաւոր դատի միջոցին։ Պատրիարքարանի ժողովներու շրջանակէն դուրս, իր աշխատութեան մեծագոյն բաժինը նուիրած է Բերայի թաղային գործերուն, իրր տասը տարուան ասանապետութեամբ մը թաղական Խորհուրդին օր աջնքա՛ն օգտակար եղաւ։

Ինքն էր որ այդ ընդարձակ մատակարարութիւնը կողմակերպելով ու կանոնաւորելով, զանազան ճիւղերու բաժնեց ու առանձին մարմիններու յանձնեց։ Միւսնայն ժամանակ՝ իմենց ազգականց, Արուստանոյը սրտն փայլուն շրջանը կենդանի է դնուած նուազ յիշուած թեան մէջ, երբ կար ու ձեւ, ասեղնագործութիւն,

պոստըրի, օժիւաներու պատրաստութիւն, վերջապէս կանացի նուրբ ու ճարտար մատներէ կլլող ամէն տեսակ ձեւագործ կը կատարուէր արագ, կատարեալ ու զեղեցիկ այդ տիպար-հաստատութեան մէջ։ Արուստանոյի սանուհիներէն չատեր, սմանք այսօր մայր եղած եւ ուրիշներ ազգիկ, իրենց ստացած գործնական կրթութեանը ու մասնագի-

տութեանը շնորհիւ կ'ապրեցնեն ինքզինքնին ու իրենց ընտանիքը։

Ազգ. շրջանակի մէջ՝ Նուրեան էֆէնտիի վարած վերջին պաշտօնը եղած է 1896ի Խաւն ժողովին դեր-ատենապետութիւնը։ Իրր եր-

կու տարի առաջ ալ ստուար քուէներով ան դամ ընտրուեցաւ Բերայի Թաղ. Խորհրդին, վերստին անոր ատենապետութեանը կոչուելու համար, բայց հրաժարեցաւ։

Իր անհատական կեանքին մէջ Նուրեան էֆ. ընկերական մարդու եւ բնականիքի հօր ամէն ձիրքերով օժտուած էր։ Իր 27 տարի առաջ ամուսնացած էր Կիւմրէշճի Գասպար աղայի ազգական հետ (Տիկին Փարիս Յ. Նուրեան) եւ ունեցած է վեց զաւակներ որոնցմէ երկու աղջիկները ամուսնացած են




ՎՍԵՄ. ՕՅԱՆՆԷՍ ԷՖԵՆՏԻ ՆՈՒՐԵԱՆ

մէկը Սեդրաք էֆ. Մանուկեանի եւ միւսը՝ Պալեօզեան Սերգօ պէյի հետ։ Միւս չորս զաւակներն են՝ Կարապետ եւ Մելիք էֆէնտիները, — առաջինը աշխարհական ասպարէզին մէջ ու երկրորդը տաճարէն ուսանող, — եւ Օր. Մամի ու Օր. Աննա Նուրեան։ Հանդուրեալը մեծ հոգածութեամբ հակած է իր զաւակներուն կրթութեանը ու դաստիարակութեանը։

Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ կիրակի օրը, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, նմանը քիչ անգամ տեսնուած հանդիսաւորութեամբ մը որուն կը նախագահէր Ս Պատրիարքը, Դամբանակոյնը խօսեցաւ Երզնսզէմի Պատր. Փոխանորդ Տ. Գէորգ Եպիսկ. Երէջեան, Ներկայ էին հայ եւ օտարազգի ականաւոր անձնաւորութիւններ, գլխաւորա-

բար պետական պաշտօնատարներ, դեսպանական մարմնի ներկայացուցիչներ, սեղանաւորներ, վաճառականներ, Պատրիարքարանի ժողովաց անդամներ, Կւայն, ու ժողովրդեան ստուար բազմութիւն մը: Նուրեան Էֆէնտիի մարմինը ամփոփուեցաւ Շիշիի ազգ. գերեզմանատան մէջ որուն լարեզարդութեանը մեծ աշխատութիւն նուիրած էր հանգուցեալը ատենօք:

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՔԵՐԹՈՒԱԾՍ



ԱՐՅՈՒՄ մը որ գիս շատ կը շրփօրէ,
Առաջին քերթումս . . . իրիկամուտ է
Ու չեմ յիշեր այն երազը ժպտուն
Որ լուսաւորեց իմ կեանքիս առտուն:

Հեռուն՝ շատ հեռուն, մշուշին մէջէն
Հուրիններ աչու երգեր մրմնջեն,
Բայց իմ առաջին երգս յիշէմ միքէ,
Հարցում մը որ գիս շատ կը շրփօրէ:

Մանիշակ մ'էր այն համեստ ու անշուք,
Արդե՞ք ժպիտ մ'էր եւ կամ արտասուք
Թիթռան մը համար քափուած, ո՞վ գիտէ,
Հարցում մը որ գիս շատ կը շրփօրէ:

Իդձ մ'էր խաբուսիկ, ո՞հ, լաւ չեմ յիշեր
Որ իմ մանուկ սիրտս արդէն կը մաշեր
Ինչպէս բռնեցիկն ոսկեգօծ բուդրէ,
Հարցում մը որ գիս շատ կը շրփօրէ:

Հառաչ մ'էր քերեսս այն երգն առաջին
Պարզամիտ շեշտով ուղղեալ արարչին՝
Թի: վարդն հոտաւետ ինչո՞ւ փշոտ է,
Հարցում մը որ գիս շատ կը շրփօրէ:

Իսկ իմ երգ վերջին՝ գգացմամբ հասուն,
Բայց պիտի պահե՞ այն դրոշմը սիրուն՝
Թաքմ քոյրը մանկան որ սիրտ կը դիւթէ,
Հարցում մը որ գիս շատ կը շրփօրէ:

ՌԻԶԵԻՈՐԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Բ.

ՊՏՈՅՏՆԵՐ ՌԱԿԱՑԻ ՇՈՒՐՋԸ



ԱԶՈՐԴ օրը Քոէլլէնհօֆ պանդոկը գացի ուր Տիկին ֆօն Տէչի ընդունեց զիս . ամուսինը երկու շաբաթ առաջ քանի մը օտարականներու հետ, որոնք քիչ ժամանակի մէջ հինաւուրց բարեկամներ դարձած էին ինչպէս յաճախ կը պատահի ճամբորդութեան մէջ, էնկատիին բարձունքները մազլլցելու գացեր էր եւ դեռ երեւան չեն ելեր, ինչ որ ուրիշ տիկինի մը մեծ մտահոգութիւն պիտի պատճառէր, սակայն ինքը վարժուած ըլլալով ամուսնոյն այդօրինակ յաճախակի բացակայութեանցը, չատ հող չէր ըներ. միայն թէ մինակ մնացած էր եւ եթէ քանի մը նորաստաց բարեկամութիւններն ալ չըլային՝ սիրաւ պիտի ճաթէր. ուստի «ձեր ներկայութիւնը մեծ հաճոյք պատճառեց ինձ, — ըսաւ, — ձեզմով հիմայ բարեկամ ընկեր մը ունիմ. յաճախ մէկտեղ դուրս կ'ելլենք, բարեկամութիւններս ալ մէկտեղ կ'առնենք, ասոնք ալ քաւալիիչ չունին, կառքով պառոյտներ կ'ընենք, այնպէս չէ՞»։ Շիտակը խօսելով այնպէս չէր. որովհետեւ, նախ որ ես կառքով պառոյտ ընել ընաւ չեմ սիրեր ու փոխանակ իմ ուզած կերպովս երթալու՝ կ'ուզէ որ ես իր ուզած կերպովը երթամ. երկրորդ՝ պառոյտներու մէջ առանձնութիւնը կը սիրեմ, եթէ բոլորովին ինծի համակերպող ընկեր մը չգտնեմ. բայց աւելի լաւ կ'ըլլար սա բացատրութիւնը տալ որ ընկերութեան մէջ չաա հաճոյակատար ըլլալու համար, բնութիւնը կատարելապէս չեմ կրնար վայելել, եթէ հետս

անանկներ գտնուին որոնց հետ ստիպուած եմ կարգուձեւով վարուիլ : Բայց ինչ կրնայի ըսել Տիկինին . սիրով ընդունեցի իր առաջարկը եւ հետեւեալ օրը լանտոյի մը մէջ կը գետեղուէինք՝ Տիկինը, ես ու իր երկու բարեկամութիւնները, երկու անգլուհի աղնուականներ, որոնց ներկայացուեցայ ամուսնոյն յարգանք : Ես ալ պէտք ունէի այս օրինակ պառոյտի մը, որովհետեւ չէի կրցած Ռաիայը ճանչնալ եւ կառքով պառոյտ մըն ալ այս պէտքը գոհացընելու հետ չյօգնեցնելու հաճոյքը պիտի տար ինծի :

«Թամինայի բերնէն մտնելով Բէֆէրսի ճամբան բռնենք եւ Վարդընշթայնի պառոյտը ընենք.» ըսաւ Օրիորդ անգլուհին, բարակ իրանին վրայ հերարձակ դեղին գլուխ մը բարձրացնող աղջիկ մը, 14—15 տարեկան, որուն համակերպեցանք ամէնքս ալ. բայց ես ուղեկիցներուս հետ գտնուելու հաճոյքէն ու պատիւէն զատ լաւ մը չհասկցայ այս պառոյտէն որ այնքան գեղեցկութիւններ ցոյց կուտար մեզի. տիկինները զայն քանիցս վայելած ու յափրացած ըլլալով՝ ալ չէին հետաքրքրուէր. եւ ամէն վայրկեան մէջ մէկ հարցում, մէջ մէկ շարժում ունէին ընելիք՝ զիս իրենց խօսակցութեան մէջ խառնելու համար. համակերպելէ ուրիշ ինչ կրնայի ընել : Ուստի երբ կառքը պանդոկին առջեւ վերադարձաւ եւ ես հրաժեշտ առի իրենցմէ, ընդունելով նոյն իրկուան համար Տիկին ֆօն Տէչիին ընթրիքի հրաւերը՝ սեղանակցութեամբ անգլուհիներուն, միտքս դրի երկրորդ օրը առանձին կրկնել այս սքանչելի պառոյտ :

Ժամանակը ուշ էր, ուստի ուղղակի պանդոկ դարձայ եւ զրօտաշրջիկի տարազս կռնակէս հանելով՝ սրահների ստամպուլինը հագայ : Այսպէս երբ ձեռնոցներս քնելու զբաղած՝ սենյ

եակէս զուրս կ'ելլէի, նորանցքին մէջ գե-
ռահաս ազդիկ մը զիս նշմարելով ելեկարա-
կան հոսանքի արագութեամբ ճամբուս վրայ
զանուող դռներուն հէտ հաղորդակցութեան
մտաւ, եւ ահա՛ կիսաբաց՝ դռներուն մէջէն,
հետաքրքիր պոռնիներ երեւցան, սանդուխին
աստիճաններուն վրայ հոս հոն իրաններ ցըց-
ուեցան. վարի յարկը միեւնոյն չարժուածք,
միեւնոյն հետաքրքիր եւ զարմանքի նայուածք-
ները դէպի ինձ. ինչ կայ, Աստուած իմ: Այս
ընդհանուր շարժումին մէջ՝ պանդոկին յանձ-
նակատարը զոր Պոլսեցիներս «պանդոկի թարգ-
ման» կը կոչենք, մօտեցաւ ինձ յարգանք եւ
«Ներեցէ՛ք, պարոն, ըսաւ, ձեր հասցէին
խել մը նամակներ եւ լրագիրներ կան նամա-
կատունը, զորս ես մերժեցի ընդունիլ. —
Ինչ կ'ըսէք, ինչո՞ւ համար մերժեցիք. —
Միթէ դուք քահանայ չէք — Ո՛չ, ըսի ու-
սերս ցցելով,» Եւ ահա Փանոսեանին ար-
ձագանգը չրթունքէ չրթունք՝ վէտ վէտ ըն-
թանալով կանգ առաւ ֆահաւսայ չե եղերի
զարմացական չըջուկ մը արածակելով իր ե-
տեւէն: Այս անգամ գրադիր՝ օրիորդն էր որ
քթիս կը խնդար խցիկին փոքրիկ պոտուհա-
նէն զուլըր դուրս երկնցուցած: Խնդրեցի յանձ-
նակատարէն որ ինձի վերաբերեալ ամէն ինչ
բերէ նամակատունէն ու սենեակիս մէջ դնել
տայ. եւ գրադանէո այցաքարս իրեն յանձնե-
լով խոյս տուի այս տեսարանէն որուն պոտ-
ճառ տուած էր իմ անխոհմտութիւնս:

Հետեւեալ օրը՝ վճիռ պայծառ օդով մը որ
յաճախ կ'ընդմիջուի Ջուլիցերիոյ մէջ տեղա-
տարափ անձրեւներով, պանդոկի ձախ կող-
մէն երկարող ճամբան բռնելով՝ ուրախ, զուարթ
եւ թեթեւ քայլերով սկսայ յառաջանալ, Պէ-
թէքէր ի գրպան եւ հովանոց ի ձեռին, ու քիչ
յետոյ Թամինա գետը գէմս գտայ: Այս տեղ
լերան մը պատուաւքին մէջ մտաւ ճամբան
ուսկից վայրագ Թամինան ահագին մռնչիւն-
ներով ինք իր վրայ փրփրադէզ թաւալումներ
ընելով դուրս կը խուժէր, պատուաւքը ու-
րուն երկու կողմէն 190էն 250 մէթր բարձ-
րութեամբ ժայռեր կը ցըցուին, այնչափ նեղ
է որ ճամբան եւ Թամինան հազիւ կրնան քով
քովի տեղ գտնել. հոս՝ հեզեզ մը ժայռերու
վրայէն կ'ոսանու, հոն՝ փրփուրներ, աղան-

ներ որ քարերու մէջէն կը ֆշան, քիչ մը
վերը նեղ՝ վճիռ ժապաւէն մը որ ժայռին եր-
կայնութեամբ տեղ է բերել եւ մնջիկ մնջիկ
կը սողոսկի. դէմք, կռնակ, քովք, առջեւ
ժայռ, ժայռ, միշտ ժայռեր կը բարձրանան:
Երբեմն սեւ, երբեմն կանաչ. ջուրն ալ եր-
բեմն սեւ, երբեմն փրփրադէզ ու ճերմակ,
բայց երբեք երբեքստանգ:

Արեւին ճառագայթները չեն համբուրել այս
ժայռերը, իրենց բոցերը չեն հրահրել ջուրե-
րը. տխուր ամեհութիւն մը կը տիրէ այս ա-
մէշուն վրայ. խոնաւ շունչ մը կը ծաւալի
ամենուրեք ու զքեզ ալ կը պարուրէ. կը զգած-
ուիս, պզտիկ սառսուռ մը սոսկում մը կը
տիրէ, կը պաշարէ զքեզ, տեղ տեղ երկինք
ալ չերեւար՝ այնչափ ժայռեր իրարու մօտե-
ցած են, տեղ տեղ կը կարծեալ խարհի ծայ-
րը հասած ըլլալ՝ ճամբան այնքան սուր ան-
կիւն մը կը կազմէ: Այնպէս ջուրին, օդին,
տեսարանին անգեցուցութեամբ բոլորովին զինով-
ցած կը հասնիմ Ծովթէնֆալ ճաշարանը:
Երէկ, կառքով ճամբանիս շարունակեցինք.
ասկէց անդին փոքրիկներքնուղիէ մը անցանք
որ ժայռին մէջ բացուած էր. բայց ես Պէ-
թէքէրիս խորհրդով կ'ուզեմ ձախ կողմէն, ճա-
շարանին քովէն՝ օձապոյտ բարձրացող արա-
հետէն վերմաղլցիլ, Թամինային վրայ ձգուած
կամրջակէն անցնելով: քառորդէ մը վերն եմ:
Ճամբուն վրայ ցցուած գերանի մը վրայ կը
կարգամ Վաշանա եւ ցուցամառ մը որ աջ
կողմը ցոյց կուտայ, ուրիշ մը Բէֆէրս բնա-
կան կամուրջէն որ ձախը կը ցուցնէ. այս վեր-
ջինին կը հետեւիմ եւ քիչ յետոյ բնական կա-
մուրջին վրայէն կ'անցնիմ որ՝ վարը պատուաւք-
քին մէջ հանքային ջուրերու բլիսած տեղին
ճիշտ վրան կը գտնուի եւ երկու բարձունք-
ներուն զիրար գրկելովը ձեւանալուն պատ-
ճառաւ Պեշլիս «փակում» կը կոչուի. սոյն
կամուրջին վրայէն քանի մը կանանչ տերեւ քա-
ղցի ի յիշատակ ու զետեղեցի այս նպատակաւ
գրադանած տետրակիս մէջ որ դեռ այս պա-
հուս սեղանիս վրայ բացուած կը կենայ, խել
մը ուրիշ ծաղիկներու եւ տերեւներու հետ:

Հիմայ լերան աջ կողմին վրայ եմ ուր
փայտէ սանդուխ մը, որուն աստիճանները
ցից ժայռին վրայ կը բարձրանան, դժուարաւ

20 վայրկեանէն զիս գագաթը կը հանէ ուր
օտաք կը գնեմ սքանչելի մարգարէանի մը
վրայ որ կը պարզուի առջեւս . ասոր կը յա-
ջորդէ անառակ մը եւ յետոյ դարձեալ
մարգ եւ դարձեալ անառակ . այսպէս կը
հասնիմ կառուղիին վրայ որ զին կը տանի Բէ-
ֆէրս գիւղը :

Բիչ մը յոգնած եմ եւ շատ ալ անօթի .
պանդոկի պէս բան մը կը գտնեմ հոն , որուն
ճակատին վրայ կը կարդամ «Ատիեր» , հոն ճաշս
կ'ընեմ կուշտ ու կուռ . թէպէտ պարզ , շատ
պարզ , բայց ինչ անորմակով . ինչ ալ հա-
մով ճաշ . իրաւ է . որ երբ պանդոկէն դուրս
ելայ , ստիսն ու սխտորին բուրումն ալ հետոյ
տարի մինչեւ իրիկուն : ճամբաս շարունակե-
լով կէս ժամու չափ քալելէ ետքը , կառու-
ղին լեռը կը գտնայ եւ ահա տեսարանը կը
փոխուի . ցից բարձունքի մը վրայ եմ հիմայ
կառուղին՝ այս բարձունքին վերին կուշտին
վրայ գծուելով կիսաբոլոր կը դառնայ . վերը
ջինջ երկինք , վարը անհուն գեղազուարճ
դաշտ մը զոր հետուն , հետուն , գորշ լեռներու
գօտիներ՝ ամպածրար եւ ձիւնագագաթ՝ կ'ե-
զերեն եւ երկնից հորիզոնը կը կազմեն կիսա-
բոլոր . բնութիւնը կը ծփծփար մաքուր , վճիտ ,
խնկաբոյր օդի մը մէջ . աջ կողմս , անդին ,
հարիւր քայլի մը չափ վարը , գառիթափին
եզերքը , աւերակներու կոյտ մը կը տեսնեմ :
Ասոնք ըլլալու են անշուշտ , կ'ըսեմ իւրովի ,
Վարդընչլիայնի՝ աւերակները . ինչպէս ցոյց
կու տար Պէթէքէրըս . ձախ կողմս ծաղիկով ,
տերեւով , տեսակ տեսակ բազմոյններով ծած-
կուած , գառիթափին - գագաթը որ այս բար-
ձունքին սարահարթը կը կազմէ , չէնք մը կը

տեսնեմ որուն կռնակը քիչ մը հեռու ուրիշ
չէնք մըն ալ . այս բոլոր կանանչներուն մէ-
ջէն՝ երկյարկ պատշգամները միայն ցոյց կու
տայ գլուխը եւանդիկն զլիարկ մը դրած .
այս բարձունքէն կառուղին միւս կողմէն վար
սողոսկելով անառակներու մէջ կը կորսուի .
իսկ ես կառուղիին քովէն բարձրացող ճամ-
բուն վրայ դառնալով՝ վերին չէնքին առջեւը
կ'ելլեմ որուն առջեւ կը տարածուի բաւական
ընդարձակ դեպին մը որ այս չէնքը միւս չէն-
քին հետ հազարակցութեան կը գնէ մեզմ
գառիթայր մը կազմելով : Այս հարթ դեպին
եզերքը , որուն մէջ , ինչպէս ըսի , կը բարձ-
րանան երկու չէնքերն ալ , ցանց մը պատած
է , կանանչ տերեւներէ , գոյնգոյն , ժանեկա-
ծեւ , դանդակածեւ ծաղիկներէ յօրինուած :
Կէս օրը մէկ երկու ժամ անցած է , կիզիչ ա-
րևի մը ուղղաձիգ ճառագայթները կ'ոգեւո-
րեն այս բարձունքը , եւ որուն տաքութիւնը
տակայն կը բարեխառնուի անոյշ զեփեփո մը
զօլով թնէն որ լերան կողերը ծածկող եզե-
ւիներու եւ ուրիշ տունկերու ու ծառերու
բոյրերը կը բերէ վեր . գաղջ եւ անոյշաբոյր
մկնդորտ մը կը ծաւալի շուրջ , կը պատէ
գլքեզ ալ : Կը տաքնաս , կը հրահրիս , կը զըր-
գըրիս , բայց չես վրդովիր . հոգեպարար բան
մը , երանաւէտ վայելք մը կը զգաս հերթիդ
անպատում եւ անպարագելի . զգլխի՛ բայց
ոչ խափիչ : Արդեօք Վարդընչլիայն պանդոկն
է այս չէնքը կամ թէ մասնաւորի մը զլեւակ-
քիչ մը գծուար է , որոշել , այնչափ խաղաղ
լուսթիւն մը , խորին անէտթիւն մը կը տի-
րէր հոս :

(Շարունակելի)

Տ. Հ.

Յ Ե Ր Ա Տ Ա Վ

ՊԵՆՆԱՄ ու չոր ծաղկի բերքեր,
Հոս մոռցրած իրարու քով .
Ըզքեզ լեցուն կը գտնեմ դեռ .
Անոր անմահ յիշատակով :


Օր մ'իր կուրծքէն իմ ձեռքս ինկաք .
Ձեր բոյրին հետ բերիք ինձի
Սիրելոյս սիրտն անոյշ ու տաք ,
Համբոյրներով ձեզ սրնուցի :

Ինչ յուսահատ արցունքներու
Տակ հալեցան ձեր գոյնն ու հոտ .
Հոգեոյս մօտիկ , աչքես հեռու ,
Դեռ կու լայ գայն սիրտս արիւնտ :

Դեղնած ու չոր հոս կը պառկիք ,
Չորցաւ ձեզի պէս իր սերն ալ ,
Ինք բաղդաւոր , ես անոքիկ ,
Ու չը կրցայ գինքը մոռնալ :

Կ. ՈՍԿԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ



Թեեւ մեր առաջին յայտարարութեամբ ծանուցած էինք քէ Մասիսի բաժանորդագրութիւնները 1900 Յունուար 1է միայն կը հաշուուին, բայց խնդրանքները այնպէս յարանուն կերպով յաջորդեցին իրարու, մանաւանդ գաւառներէն, որ անկարելի եղաւ ամենուն ալ հասնիլ,—յունուարի մէջ հրատարակուած հինգ քիւերը բոլորովին սպառած ըլլալուն պահ հառաւ: Հարկադրուած ենք ուրեմն գործնական բարեփոխում մը ընել, ամեն ամսոյ 1էն բաժանորդագրութիւն ընդունելով,— միշտ մէկ տարուան համար սակայն: Այս կերպով պիտի կրնանք գոհացում տալ յաջորդաբար հասնող յանձնարարութիւններուն, մանաւանդ որ այսօրուրնէ սկսած՝ Մասիսին tirageը աւելցնելու հանելի հարկին մէջ զտնուեցանք, յաջորդութիւն մը զոր աւելի համեմատեան ցցուցած համակրանքին կը պարտինք քան քէ երբեքագրութեան աշխատութեանը որ շատ քերի կողմեր ունի տակաւին:

“ՄԱՍԻՍ, Ի ՅՈՒՇԱՏԵՏՐԸ



Ի/ԻԿԻՈՅ Կաթողիկոսական ընտրութեան վերաբերմամբ, — որ միշտ առաջին տեղը կը զբաղէ Պատրիարքարանի լուսնունդ մէջ, — երկու կարեւոր իրողութիւններ ծանուցուեցան վերջին եօթնեակին: Դատական նախարարութեան ներկայացուցիչը Պէհա պէյ՝ Ատանա ուղեւորեցաւ Կիրակի օրը 6 ինտրուար: Իսկ Խապայեան Տ. Սահակ եպիսկոպոսին մեկնելուն նկատմամբ՝ երեք շաբթի օրը Պատրիարքարանէն հեռագրութեամբ Նորասպիտակ Ս. Պատրիարքին որպէս զի արտօնէ լուստարարուեալ Սրբազանը՝ անմիջապէս Ատանա մեկնիլ, ուր պիտի գտնէ իր պաշտօնին վերաբերեալ յանձնարարական թուղթերը ու հրահանգները:

Յունուարի վերջին շաբթուն, գաւառացի կարօտեալներու ի նպատակ մայրաքաղաքի մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքը եղած է 3795½ զրչ: Շատ լաւ զրութիւն մըն է զոր հաստատեց Նպաստից Յանձնաժող

զովը՝ պարբերաբար հրատարակութեան տալով այդ նպատակներուն գումարը որ մեր բարեգործութեան ջերմաշարին տատիճոնները կը յուցնէ, միեւնոյն ժամանակ յիշեցնելով կարօտութիւններն ու պէտքերը որոնց մասին քարոզ, չրջաբերական ու լրագրական հրաւերներ իրենց վերջին բառը ըսին արդէն: Բարեգործական նուիրատուութեանց կարգին մէջ, համակրանքով յիշուելու արժանի են Պարտիզակի ազգայինները որոնք 2000 զրչի գումար մը զրկած են Հիւանդանոցին, կէտը՝ եկեղեցիին մէջ չրջապած պնակներէն գոյացած, իսկ միւս կէտը Մոտենդի առթիւ կատարուած հանգանակութենէ: Պէտք կա՞յ այս առթիւ յիշեցնելու, թէ այդ գեղազուարճ գիւղին Հայերը ի՞նչ օրինակելի ընթացք մը կը յուցնեն, գերազանցելով զիւրաքաղաքներու եւ գաւառական քաղաքներու շատերը, իրենց նիւթական նպատակներովը, իրենց կրթասիրութեամբը եւ իրենց զրասիրական ճաշակովը: Մամուրեանի Յորեկանին առթիւ, Պարտիզակի վարժարանները առաջիններէն մէկը եղան որոնք գեղեցիկ հանդէսով մը տօ-

նեցին Իգմիրի ալեւոր զրազէտին յիսնամեակը, եւ Պոլսոյ հայ մամուլին օգտաշատ ու հաւնուած աշխատակիցներէն մէկն է Տօքթ. Յ Տ-Ստեփանեան (ինքն ալ Պարտիզակէն) որուն զրուածքները Մասիսի մէջ հիւրընկալելու բազմը կ'ունենանք :

* * *

Գաւառային լուրերու կարգին մէջ ծանուցուեցաւ, թէ Բաղէշի 12 հայ բանաւոր-կեանքներուն գաղտնաբերութիւնը տեղի ունենալով, անպարտ հռչակուելու ու ազատ արձակուելու են անոնք, բարեմաղթութիւններ ընելով Վեհ. Սնկթանին արեւշատութեանը համար : Այս բերկրառիթ տեղեկութիւնը Բաղէշի առաջնորդին կողմէ գրուած էր Պատրիարքարան որ հաղորդեց զայն աղգ. թերթերուն : Ուրիշ տեղեկութիւն մը, դարձեալ Բաղէշէն հասած, — բայց որ ապահովաբար Պատրիարքարանի բովէն անցած չէ, Արեւելի մէջ երեւցած այն արձագանգն է, թէ Բաղէշցիները զԺգոճ մնացել են որ Պատրիարքարանը 10 ոսկիի նպաստ մը յատկացուցելու է իրենց առաջնորդարանին, ուրիշ վիրաւորուած կը զգան իրենց արժանապատուութիւնը : Մենք սրչափ որ իմացած ենք, այդ նպատակ մէկ անգամի համար էր եւ ո՛չ թէ ամսական, եւ յատկացուած է ո՛չ թէ Առաջնորդարանի ծախքերուն՝ այլ առաջնորդ Զիլինկիրեան վարդապետի անձին որուն համար մեղք մը չէ գաւառացի պարկեշտ ու ազգատ եկեղեցական մը ըլլալը : Ամէն պարագայի մէջ, Բաղէշի ազգայիններուն այս հպարտութեան զգացումը արհամարհելի չէ բնաւ : Ընդհակառակը : Եւ նպատակից Յանձնաժողովը՝ իր կիսովին դատարի Մտուկին առջեւ՝ պիտի փափագի որ տեսակին մէջ առաջինը չըլլայ այս «զանգատը» :

Սուրհանդակ՝ իր Ազգ. Քրօնիկին մէջ, հարսանեկան վիճակագիր մը կը հրատարակէ որ չահեկանութենէ զուրկ չէ : Ս. Սարգիսի տօնին, յորում կը սկսի ամուսնութիւններու գլխաւոր շրջանը, Պատրիարքարանէն 30 հրամանի միայն տրուած է, անոնցմէ 15-16ն ալ ձրի : Մեր պաշտօնակիցը գիտել կու տայ թէ այս 30 թիւը շատ աննշան բան է մայրաքա-

ղաղիս Հայերուն համար, բազմաթիւ մը այն գաւառական քաղաքներուն ուր՝ այս միջոցին 20է աւելի հարսնիքներ կը կատարուին : Այս նօթը արտատպելու առթիւ, անկեղծ հաճոյքով մը կը ծանուցանենք թէ Սուրհանդակը իր միամտայ շրջանը տալաւ իր չորսրած՝ իր ծառայը զգալապէս կ'աւելցընէ այսօրուէն սկսելով, օրական իր 240 տող աւելի նիւթ պարտնակելու չափ : Եւ այս՝ առանց գինի վրայ որ եւ է յաւելում ըլլալու . . . հակառակ «Թրանսօլայի պատեւաբազմին պատճառաւ թուղթին սղած ըլլալուն» : Ահա՛ բացատրութիւն մը զոր Մասիս ալ իր կարգին գործածելու հարկին մէջ կը գտնուի, իր թուղթին գինն ալ յարաճուն կերպով բարձրացած տեսնելով չարթէ չարթ, առանց սակայն գինի բարձրացումի գաղափարը ունենալու : Հարաւ. Արիւրիկեան պատերազմ . . . եւ հայ գրականութիւն . զէպքերը ուրիշ՝ մինչեւ ո՛ր կ'ազգեն եղեր նիւթապէս : Օրական պաշտօնակից մը, բարեկամական կատակով մը անշուշտ, կը գրէր անցեալները մեզի համար, թէ այնքան զբաղած ենք գրականութեամբ՝ որ հաշիւը կը մոռնանք : Իրեն վերաբերող հաշիւներու համար ըսել կ'ուզէր թերեւս, զորս երկար բարակ պրոպետու պէտք չէինք տեսեր, մինչդեռ մենք մեր պզտիկ հաշիւները քիչ շատ գիտենք, — նոյն իսկ լրագրական հաշիւները, զորս ուշ կամ կանուխ կը մաքրենք գրիչով : Առջի օրէն չուզեցինք Մասիսը կոխի թերթ մը ընել, եւ այս է պատճառը որ չպատասխանեցինք մեզի նկատմամբ մեր յարգոյ պաշտօնակցին ըրած ակնարկութիւններուն : Եւ յետոյ, մեր ընթերցողները, թէ՛ Պոլսոյ մէջ եւ թէ՛ գաւառներուն մէջ, այնքան ջերմապին ընդունելութիւն մը կ'ընեն չարթաթերթ Մասիսին, որ մեր գրական ծրագրէն ու գծած ուղղութենէն չենք ուզեր շեղիլ, բանակոխի ու պայքարի յատկացնելով մեր սուղ էջերը, — բաւական է որ այդ հարկին մէջ չգտնուինք օրին մէկը : Եւ այս պատճառով է նաեւ որ կարեւորութիւն չունայեցինք կիսաչարթական թերթի մը — Մեծնուայի Ախպարի մէջ — երեւցած անստորագրի յօդուածի մը, զոր գրողը գայթակղած կ'երեւայ Զօհրապի

Երջանիկ մահը նորապէս, երջանիկ մահը... կրօնական տեսակէտէն միայն նկատելով: Միծաղելէն օտիչ ի՞նչ կրնանք բնել այս տեսակ մեկնութիւններու վրայ: Գոնէ իր ստորագրութիւնը դնելու համար ձագկութիւնը ունենար մաքրակրօն ու բարեպաշտ յօգուածազիրը:

Տ. Ա.

Հ Ո Գ Ո Ւ — Հ Ա Յ

Ե Ի

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍԵՂԱՆ

Այս երկուշարթի զիշեր, Սրբանախի հանդիսատարաներուն մէջ համախմբուած հարունեւորներու երկսեռ բազմութիւնը՝ երբ զընտարթ բաժակներ կը պարպէր նորապսակ տնային, — Արամ էֆ. Գարամանեանի ու Օր. Միննի Հարենցի, — երջանկութեանը, պատրաստուելով կայթատօնին որ պիտի յաջորդէր հարսանեկան սեղանին, կրկնակ բարեգործութեան մը գոհունակ տպաւորութիւնը կը կրէր նախ որ, այդ հանդէսին առթիւ, 60—70 ոսկիի մօտ գումար մը նուիրուած էր Հիւանդանոցին, երկու կողմի ազգականներուն ու բարեկամներուն կողմէ՝ փոխանակ ծաղիկփունջ զրկուելու, — բան մը որ սովորութեան կարգ պիտի անցնի տնչուշա՝ ծանօթ ընտանիքներու մէջ կատարուելիք հարսանեկան հանդէսներու առթիւ: Յետոյ, ինչ որ ոչ նուազ յաականշանական է մարդասիրական տեսակէտով, փեսային հայրը՝ Յարութիւն էֆ. Գարամանեան 30 ոսկի զրկուած էր Հիւանդանոցին, որպէս զի իր հանդուգնաց ծնողաց յիշատակին Փրկչի մատրան մէջ պաշտօն մատուցուելէ ետքը ընդհանուր պատրաստակարարներուն հոգեհայ արուի նոյն օրը իսկ ուր հարսանեկան հանդէսը կը կատարուէր Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ: Պատրիարք Սրբազանին նախագահութեամբ եւ հայ ու օտարազգի հրաւիրեալներու ընտրեալ բազմութեան մը ներկայութեամբ:

Հիւանդանոցին վրայ դարձուած այս աղնիւ մտադրութիւնը, ընտանեկան ուրախութեան մը առթիւ, կրկնապէս ջերմագին դար-

ձուց այն համակրայից շնորհաւորանքները որոնք ամէն կողմէ ուղղուեցան Գարամանեան ու Հարենց բնտանիքներուն, կատարուած ամուսնութեանը առթիւ:

Խաղիւզի Գալֆայեան Որբանոցին ալ 5 ոսկի նուիրեց Տիկին Յ. Գարամանեան՝ իր որդւոյն ամուսնութեանը առթիւ:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Հիւանդանոցին ի նպատ տրուելիք նուազահանդէսին Կարգադիր Մանախոմար կազմուեցաւ բարձր դասու պատկանող Տիկիններէ եւ ծանօթ ու գեղարուեստասէր երիտասարդներէ որոնց անունը ինքնին երաշխաւորութիւն մըն է որքան նիւթական յաջողութեան, նոյնքան եւ նուագահանդէսին լաւ կազմակերպութեանը:

— Արսւնայէ կի մէջ (Նիկոմիդիոյ թեմ) կիներու յատուկ լսարանի մը բացումը տեղի ունեցեր է՝ քահանայի մը նախագահութեամբ, որ եկեղեցական ազօթքներու եւ շարականներու երգեցողութիւնէն յետոյ, կիներու պարտականութեան եւ անոնց դաստիարակութեան պէտքին վրայ բանախօսութիւն մը արտասաներ է: Վազուճնէ սկսելով, ամէն կիրակի ողիտի շարունակուի այս լսարանը:

— Պետական Խորհուրդի քաղաքային ճիւղին անդամ անուանուեցաւ Արրահամ փաշա: Կ. Պոլսոյ սեղանաւորական աշխարհին ծանօթ հովաննէս էֆ. Կիւմշեան ծանրապէս հիւանդ է եղեր Մարտիկոյ մէջ ուր կը բնակի երեք աստիճան վեր:

— Ռուսճուքի եկեղեցիին համար ուսեալ եւ արժանաւոր քահանայ մը ուղուած էր Մատրիարքարանէն որ պատասխանեց թէ տըրամադրելի քահանայ չկայ Պոլսոյ մէջ:

ԱՆՏՈՆԱՏԵՐ Կ. Ս. ԻԹԻԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Յ. ՄԱՏԹԵՆՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆինճանճըլար Եօզուռ, Կ. Պոլիս

Ի Ի Ն Ի Օ Ն

ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1828—1829 ին



ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀՐԳԵՀԻ ՃԻԻՂԻՆ
97 Միլիոն

ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԿԵՆԱՅ ՃԻԻՂԻՆ
137 Միլիոն

Ընկերութեան զրամատուէն է
ՕՍՄ. ԿԱՅՍ. ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Պուլկարիոյ Տնօրէն
Սիւնն եֆ. Քայսերլեան

Կենաց ճիւղին տեսուչ
Միհրան եֆ. Տէր Ներսիսեան

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան
Օսմ. Պանքային դէմ


THE INTERNATIONAL BROKER

(Ծանուցում)

Այն բոլոր վաճառականները, նաւորդները, խուզարկուները, հափիչները, աւետարական մարդիկը, կայրուածատէրները եւ մասնաւոր անձեր որոնք գնելու կամ ծախելու քան մը ունին, ինչպէս առն, շինութեան անդ, հողեր, հանքային հորեր, գործարաններ, առեւտրական տուններ, բաղնիքներ կամ զանազան ապրանքներ, ծրարներ, մեքենաներ, եւ այլն, ինչպէս նաեւ այն անսակ մարդիկ որոնք կ'ուզեն ուրիշ մը հետ ընկեր ըլլալ կամ ընկեր մը կը փնտեն, հետազոտութիւններու, աւետարական գործառնութիւններու, սենտիքաներ եւ ընկերութիւններ կազմելու եւ կամ թէ առեւտրական որ եւ է գործ մը աշխարհիս որ եւ է մէկ մասին մէջ կատարելու համար, պէտք է որ կարգան, բաժանորդ գրուին (տարեկան 2 չիլին) եւ ազգայնութիւններ տան վերը միշտ չափաւորութեան միջին համար, կամ պատասխանեն եղած ծանուցումներու որոնք կը հաստատուին The International Brokerի մէջ. հասցէն 11, Southampton Row, London W. C.

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ, բժիշկ եւ մասնագէտ յղային տկարութեանց, ստամոքսի, աղեաց հիւանդութիւններու, ծննդամիջական եւ դաղղիական ախտերու: Բերա, Թաքսիմ փողոց, Թիւ 10, ամէն օր կէս օրէ վերջը:

ՏՈՔԹ. Ն. ԹԻԻԼԵԱՆ, բժիշկ-մանկաբարձ, հաստատուած է Մաքրիքէոյ, Սաղըզ Աղաճ, Արդարեան դեղարանին դէմը: Հիւանդ կ'ընդունի ամէն օր (կրեքշաբթի օրերը՝ կէս օրէն վերջ ձրի): Երկուշաբթի եւ ուրբաթ օրերը, ցորեկէն ետքը կը գտնուի Սամաթիա, իր նախկին բնակարանին քով: Կը դարմանէ ամէն տեսակ հիւանդութիւններ եւ կը կատարէ վիրաբուժական գործողութիւններ մեծ ճարտարութեամբ:



Ն Ի Ո Ւ Հ Ո Մ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻԱԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Որ կը մրցի միւս բոլոր կարի մեքենաներուն հետ

ՊԱՐԶՈՒԹԵԱՄԲ

ՏՈԿՈՒՆՈՒԹԵԱՄԲ

ԱՐԱԳՈՒԹԵԱՄԲ

ԹԵԹԵՒՈՒԹԵԱՄԲ

ԱԺԱՆՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ համար միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀԱՆՆԵՍ Կ. ՄԻԱՆՆԵԱՆ

Կեդրոնատեղին, Սերքէնի, Քէօքքիւլի խան, Թիւ 3

Մասնաճիւղ, Ղալաթիա, Պէօլիւք Միլլէթ խան, Թիւ 33

Գնողներու համար վնասումն եւ ամեն տեսակի դիւրութիւններ

Ուսումնարանի գործարարի մարտիկն



ՔԷՅԻ

ԽՍՈՒՆՈՒՐԴՆԵՐ

ամէնէն դժուարահան հաւակներն
անգամ գոհացնող :

ԵԱՎՐՈՒԵԱՆ


ԵՒ

ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

քէյի խառնուրդները

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ըլլալու յատկութիւնը եւս ունին :



Եւրոպական և Իսպանական
գուլեան թէյի խառնուրդներու վաճառատունը
կը գտնուի Կ. Պօլիս, Ճէլլալ պէյ
խանին տակ, Թիւ 10 :

Ուշադրութիւն վաճառատան մարտիկն

Գ. ՊԱՂՏԱՄԱՐԵԱՆ

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԿՆԵՐ (Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ)

Ամենէն ամօթխած ծնողներն իսկ, առանց խղճահարութեան կրնան իրենց
զաւակաց յանձնարարել այս վրիժը, որ խիստ չափաւոր եւ համեստ լեզուով
կը խօսի եւ գործնական դարմաններ ցոյց կուտայ ընտանեկան յարկերուն տակ
ողջալի նախնիները գործող եւ գրեթէ տարափոխիկ համաճարակի մը հանգա-
ման քը ստացող տղոց յատուկ վատ ունակութեան մը վրայ, որ դեռափթիթ
պատանիներն ու ծաղկեցող երիտասարդները կը թառամեցնէ : Արդէն երկրորդ
տպագրութեան արժանանալը ինքնին ցոյց կուտայ գործին օգտակարութիւնը.
հետեւաբար ջերմապէս կը յանձնարարուի ամէն դասակարգի ընթերցողներու :

Գին 4 դրու

Կեդրոնատեղին է Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը, քիւ 27, Ֆինան-
ցիայի եօզուշու, Կ. Պոլիս : Կը գտնուի ամեն գրականութեան քով :

ԿԻՍԱՄՍԵԱՅ “ՄԱՍԻՍ”Ի 1899Ի ՏԱՐԵՇՐԶԱՆԸ, 608 կրկնասիւ-
նակ էջերէ բաղկացած, ճոխ բովանդակութեամբ, իբր ամբողջական հատոր մը
թղթակազմ հրապարակ եղած է եւ կը ծախուի ամէն գրավաճառի քով, Կեդրո-
նատեղին է Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Տպարան : Գինն է 40 դր. : Գաւառներէ ուղղո-
ղները պէտք է 5 դր. աւելի վճարեն իբր թղթատարի ծախք :